ԿԱՏԱՐԻ ԴԵՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1970-1990-ԱԿԱՆ ԹԹ.)

Քնարիկ Սարգսյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4
Էլ. հասցե՝ Kn.sargsyan.ysu@gmail.com
ORCID: 0009-0006-3567-279X
Հոդվածը ներկայացվել է 14.11.2023, գրախոսվել է 17.11.2023, ընդունվել է տպագրության 25.04.2024
DOI: 10.53548/0320-8117-2024.1-106

Ամփոփում

Կատարի դերակատարության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ բացահայտելու 1970-1990-ական թթ. ԱՄՆ-ի ազդեցությունը Կատարի՝ որպես պետության կայացման գործում՝ վերլուծելով ԱՄՆ-Կատար հարաբերությունների զարգացման դինամիկան, վերհանելով այդ հարաբերությունների առանձնահատկությունները, դիտարկելով ԱՄՆ-Կատար պաշտպանական համագործակցությունը նշված ժամանակահատվածում: Հետազոտությունը կատարվել է փաստերի համադիր քննությամբ, պատմաքննական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ն որոշիչ դեր ունեցավ Կատարի Պետության կայացման գործընթացում և դարձավ նրա կայունության ու անվտանգության երաշխավորը, ինչն էլ կանխորոշեց այդ երկրի հետագա տեղն ու դերը տարածաշրջանում և միջազգային հարթակներում: Կատարն իր հերթին դարձավ մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական և ռազմավարական շարժիչ ուժը՝ շնորհիվ իր ճկուն և շրջահայաց արտաքին քաղաքականության:

Բանալի բառեր՝ ԱՄՆ, Կատար, Մերձավոր Արևելք, Պարսից ծոց, միջազգային հարաբերություններ, արտաքին քաղաքականություն, ռազմավարական գործընկերություն:

Ներածություն

1940-ականների վերջին Կատարը դարձավ նավթարդյունահանող երկիր[1], և դա շրջադարձային եղավ երկրի համար թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական առումներով՝ կանխորոշելով Կատարի հետագա դերն ու ազդեցությունը տարածաշրջանում և միջազգային հարթակներում[2]:

---

[1] 1949 թ. շահագործման հանձնվեց Դուխանից մինչև Ումմ Սայիդ ընկած նավթամուղը, որտեղից նույն թվականին առաջին տանկերն «արտահանեց կատարական նավթը»:

[2] Sorkhabi R., The Qatar Oil Discoveries, https://geoexpro.com/the-qatar-oil-discoveries/

Այս շրջանը համընկավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության ակտիվացման հետ: Վաշինգտոնի նպատակն էր Մերձավոր Արևելքում հավատարիմ վարչակարգեր ձևավորելը, ինչը կապահովեր ԱՄՆ-ի գերիշխանությունը տարածաշրջանում և կկարգավորեր էներգետիկ անվտանգության հարցը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության այս ռազմավարությունը հետևողականորեն իրագործվեց՝ սկսած 1950-ականներից: 1956 թ. Սուեզի ճգնաժամի հետևանքով տարածաշրջանում առաջացավ ուժային վակուում՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջազգային դիրքերի թուլացման պատճառով, որը լրացրեց ԱՄՆ-ն:

1957 թ. հունվարի 5-ին Դուայթ Էյզենհաուերը Սենատին ներկայացրեց արտաքին քաղաքականության նոր ծրագիր, ըստ որի՝ Մերձավոր Արևելքում ցանկացած երկիր տնտեսական և ռազմական օգնության համար կարող էր դիմել ԱՄՆ-ին՝ կանխելու որևէ կոմունիստական երկրի հնարավոր սպառնալիքը: Դոկտրինն առաջին հերթին թիրախավորում էր ԽՍՀՄ-ը, քանի որ այն սկսել էր հաստատուն քայլերով ներթափանցել մերձավորարևելյան տարածաշրջան: Էյզենհաուերը մտավախություն ուներ, որ այստեղ արմատական ազգայնականությունը, միավորվելով միջազգային կոմունիզմի հետ, կդառնար լուրջ սպառնալիք Արևմուտքի համար[3]:

1960-ականներին համաարաբական զարթոնքի տրամադրությունները համակեցին նաև Կատարին. այն չէր կարող անմասն մնալ արաբական աշխարհում տեղի ունեցող քաղաքական գործընթացներից: Կատարում հասարակության առանձին շրջանակներ երկրի իշխանություններից պահանջում էին պաշտպանել Արաբական Արևելքում թափ ստացած ազգային-ազատագրական, ինչպես նաև Պաղեստինի աջակցության շարժումը[4]: Հընթացս, շարունակում էր թափ առնել ապագաղութացումը: Նորանկախ երկրների համար առաջնահերթություն էր ամեն գնով հասնել արտաքին քաղաքական օրինակարգությանը:

1969 թ. առաջ եկած Նիքսոնի դոկտրինը նախատեսում էր, որ ԱՄՆ-ը ոչ թե պատերազմների, այլ իր դաշնակիցներին ռազմական, տնտեսական աջակցություն տրամադրելու միջոցով պետք է դիմակայեր իր անվտանգությանը սպառնացող ցանկացած երկրի: Այն հավանություն էր տալիս վստահելի վարչակարգերի միջոցով ԱՄՆ-ի շահերի պաշտպանությանը: Ակնկալվում էր, որ ԱՄՆ-ի դաշնակիցները հոգ կտանեին իրենց պաշտպանության մասին, «թեև ամերիկյան զենքն ազատ կհոսի դեպի դաշնակից երկրներ»[5]: Նիքսոնի դոկտրինը միայն նախերգանքն էր մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի անմիջական ներգրավվածության համար:

---

[3] The Eisenhower Doctrine, Milestones in the History of U.S. Foreign Relations 1953-1960, Office of The Historian, https://history.state.gov/milestones/1953-1960/eisenhower-doctrine

[4] Հովհաննիսյան 2006, 764:

[5] Stork, Wenger 1991, 22-26.

ԱՄՆ-Կատար հարաբերությունների ձևավորումը

1960-ականների վերջին Կատարը սկսեց շարժվել անկախ պետականություն ստեղծելու ճանապարհով: Շեյխ Խալիֆա բին Համադ Ալ Թանին մեծ ջանքեր էր գործադրում երկրի քաղաքական կշիռը բարձրացնելու նպատակով: Երկիրը սկսեց ակտիվ համագործակցել թե՛ Իրանի, թե՛ Սաուդյան Արաբիայի հետ: Անկախության ճանապարհին կարևոր քայլ էր ժամանակավոր սահմանադրության ընդունումը, որն ընդգծում էր Կատարի ինքնիշխանությունը: Ժամանակավոր սահմանադրությամբ ամրապնդվեց Ալ Թանիների դիրքը՝ որպես կառավարող ընտանիք՝ ժառանգական իրավունքով: 1970 թ. հունիսի 1-ին՝ ժամանակավոր սահմանադրության հրապարակումից երկու ամիս անց, սկսեց գործել Կատարի առաջին կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, որը գլխավորում էր Խալիֆա բին Համադ Ալ Թանին[6]: Կատարը և Մեծ Բրիտանիան այլևս պայմանավորվել էին պրոտեկտորատի վերացման և անկախության հռչակման մասին, որի վերաբերյալ համաձայնագրի կնքումը պետք է կայանար Կատարում: Երկիրը դեռ կառավարում էր Ահմադ իբն Ալին՝ Խալիֆա բին Համադ Ալ Թանիի հորեղբայրը, որն այդ ժամանակ գտնվում էր Ժնևում: Խալիֆա բին Համադը, որը կարողացել էր իր ձեռքում կենտրոնացնել գրեթե ողջ իշխանությունը, Ժնևում գտնվող և Կատարին պատկանող թագավորական պալատը համարելով Կատարի տարածք՝ նա ուղարկեց անգլո-կատարական համաձայնագիրը, իսկ ինքը նույն օրը՝ 1971 թ. սեպտեմբերի 3-ին, պաշտոնապես Կատարը հռչակեց անկախ[7]:

Անկախության հռչակումից երկու օր անց՝ 1971 թ. սեպտեմբերի 5-ին, ԱՄՆ-ն ճանաչեց Կատարի անկախությունը: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1972 թ. մարտի 19-ին: 1973 թ. փետրվարի 24-ին Դոհայում ԱՄՆ-ը բացեց իր դեսպանատունը[8]:

1973 թ. Եգիպտոսի և Սիրիայի նախաձեռնությամբ սկսված արաբա-իսրայելական չորրորդ պատերազմը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ մերձավորարևելյան տարածաշրջանի և արաբական աշխարհի համար՝ սկիզբ դնելով վերափոխումների: Պատերազմի ընթացքում դրսևորվեց արաբական աշխարհի միասնականությունը, որի մի մասն էր նաև Կատարը: Դոհան, քաղաքական և բարոյական աջակցության հետ միասին, մեծ ֆինանսական օգնություն տրամադրեց Եգիպտոսին և Սիրիային[9]: 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի ընթացքում արաբական երկրները նավթն օգտագործեցին որպես քաղաքական զենք: Արաբական մի շարք

---

[6] Zahlan 1979, 104-105.

[7] Հովհաննիսյան 2006, 772-773:

[8] Diplomatic and Consular Relations by Country, since 1776: Qatar, A Guide to the United States, History of Recognition, Office of the Historian, https://history.state.gov/countries/qatar

[9] Հովհաննիսյան 2006, 785:

երկրների կողմից հինգ ամիս տևած նավթի առաքման կասեցմանը մասնակցեց նաև Կատարը[10]:

Վերոնշյալ պատերազմից հետո Կատարը զգուշավորություն էր ցուցաբերում ԱՄՆ-ի հետ հարաբերություններում՝ հատկապես երկրում ամերիկյան ներկայության առումով: Օրինակ՝ Կատարի կառավարությունը 1975 թ. մերժեց ԱՄՆ-ի մերձավորարևելյան ուժերի հրամանատարական նավի՝ «Լա Սելի» այցը Կատար: ԱՄՆ-ի դեսպանի հետ զրույցում Կատարի զինված ուժերի հրամանատար Համադ բին Խալիֆա Ալ Թանին նշել էր. «Հրամանատարական նավի այցը նպատակահարմար չէ, այդ որոշումը հիմնված է տարածաշրջանում առկա լարված իրավիճակի, հնարավոր միջամտությունների և անբարենպաստ մթնոլորտի հետ, որոշումը քաղաքական թելադրանք է և նպատակ չունի խաթարելու ԱՄՆ-ի հետ Կատարի գերազանց հարաբերությունները»[11]:

1979 թ. Իրանի Իսլամական հեղափոխությունը կտրուկ փոխեց իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում: Շահ Փահլավիի օրոք Իրանը դարձել էր ԱՄՆ-ի սիրելի բուֆերային երկիրը, որն արգելափակում էր ԽՍՀՄ-ի ներխուժումը մերձավորարևելյան տարածաշրջան և պաշտպանում ԱՄՆ-ի շահերը տարածաշրջանում: Իրանում շահի տապալումն ու Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վստահելի դաշնակցի կորուստը, ԽՍՀՄ ռազմական ուժերի ներխուժումը Աֆղանստան, մեծացրեցին ԱՄՆ-ի անմիջական մասնակցության անհրաժեշտությունը տարածաշրջանում[12]:

1980 թ. Ջիմի Քարթերի հռչակած դոկտրինը փոխեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ուղենիշները մերձավորարևելյան տարածաշրջանում, և անուղղակի ներգրավվածությունը փոխարինվեց ուղղակի միջամտությամբ: Քարթերը հայտարարեց, որ Պարսից ծոցը վերահսկելու ցանկացած փորձ կդիտվի որպես հարձակում ԱՄՆ-ի կենսական շահերի դեմ, և նման հարձակումները կկանխվեն անհրաժեշտ բոլոր, այդ թվում՝ ռազմական միջոցներով: Կատարն ակտիվորեն աջակցեց այս գաղափարին: Շեյխ Խալիֆա բին Համադ Ալ Թանին այս ժամանակահատվածում հիմնականում հետևում էր Սաուդյան Արաբիայի հակախորհրդային քաղաքականությանը[13]:

Ռոնալդ Ռեյգանի կառավարման տարիներին մերձավորարևելյան տարածաշրջանի առանցքային խնդիրներից դարձավ Իրան-իրաքյան պատերազմը: Ծոցի միապետություններն աջակցեցին Իրաքին՝ չնայած Սադամ

---

[10] Կարապետյան 2019, 372:

[11] Telegram From the Embassy in Qatar to the Department of State, Doha, January 28, 1975, Foreign Relations of the United States, 1969-1976, Vol. XIX, part 2, Documents on the Middle East region, 1973-1976, Office of The Historian, https://history.state.gov/historicaldocuments/frus1969-76ve09p2/d49

[12] Mousavian S., A Revolution and a War: How Iran Transformed Today's Middle East, https://www.thecairoreview.com/essays/a-revolution-and-a-war-how-iran-transformed-todays-middle-east/

[13] Kamrava 2015, 18.

Հուսեյնի վարչակարգի հետ քաղաքական և գաղափարական տարաձայնությունների առկայությանը[14]:

1981 թ. մայիսի 25-ին Բահրեյնը, Քուվեյթը, Օմանը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և Կատարը հիմնեցին Ծոցի համագործակցության խորհուրդը (ԾՀԽ)՝ ի պատասխան աճող իրանական սպառնալիքի: Խորհրդի ոչ պաշտոնական նպատակն էր երկրների պաշտպանական քաղաքականություն համակարգելն ընդդեմ Իրանի Իսլամական Հանրապետության: Հարկ է նշել, որ ի տարբերություն Իրաքին բացահայտ աջակցող Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի՝ Կատարը պատերազմի սկզբում ավելի զգուշավոր էր գործում[15]: Կատարը գիտակցում էր Իրանի ռազմական հնարավորությունների սահմանները. իրանական ռազմածովային ուժերը մոտ էին Կատարի տարածքին: Հատկանշական է, որ այս հակամարտության ժամանակ Կատարը զերծ մնաց հարձակումներից[16]:

Իրան-իրաքյան պատերազմը լուրջ մարտահրավեր էր Ծոցում ԱՄՆ-ի շահերի և հեռանկարների համար: Ռեյգանի վարչակարգն օգտագործեց իր երկրի ողջ ներուժը Իրանի դեմ՝ ոչ միայն տարածաշրջանում էներգետիկ անվտանգության ապահովման, այլև Խորհրդային Միության հնարավոր ազդեցությունը և հեղափոխական իսլամի տարածումը կանխելու համար[17]:

Խորհրդային Միության փլուզման նախաշեմին Կատարը ճանաչեց ԽՍՀՄ-ը, իսկ դա անսպասելի և մտահոգիչ էր ԱՄՆ-ի համար: Երկու երկրների միջև հարաբերությունների հաստատման մասին պայմանագիր կնքվեց 1988 թ. Ֆրանսիայում Կատարի դեսպան Աբդուլ Ռահման Համադ Ալ Աթիայի և ԽՍՀՄ արտաքին գործերի ժամանակավոր հավատարմատար Օլեգ Կրիվոնոգովի միջև: Ստորագրելու մասին միաժամանակ հայտարարեցին Կատարի լրատվական գործակալությունն ու ԽՍՀՄ-ի ՏԱՍՍ գործակալությունը: Որոշման համար Կատարը որևէ պատճառաբանություն չներկայացրեց, սակայն դիվանագիտական աղբյուրները նշում էին, որ պատճառը ԱՄՆ-ի՝ Կատարին ուղղված սպառնալիքներն էին՝ ի պատասխան Կատարի կողմից սև շուկայում 13 «Սթինգեր» տեսակի հակաօդային հրթիռների գնմանը[18]: Ենթադրվում էր, որ Կատարը դրանք գնել էր Իրանից, և այդ հրթիռները ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) այն 20 հրթիռներից էին, որոնք 1987 թ. առգրավել էին «Իրանի հեղափոխության պահապանների» կորպուսի անդամները ԿՀՎ-ի ավտո-

[14] Katzman 2022, 12.
[15] Fromherz 2012, 155.
[16] Kamrava 2017, 172-173.
[17] Kaussler 2015, 34.
[18] Qatar, Miffed by U.S. Criticism, Opens Soviet Relations, Los Angeles Times Archives. https://www.latimes.com/archives/la-xpm-1988-08-01-mn-5022-story.html

շարասյան վրա հարձակվելու ժամանակ[19]: 1988 թ. հունիսին Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի հարցերով պետքարտուղարի օգնական Ռիչարդ Մերֆին Կատարի մայրաքաղաք Դոհայում հանդիպեց թագաժառանգ Համադ բին Խալիֆա Ալ Թանիին և պահանջեց ԱՄՆ-ին վերադարձնել ձեռք բերված հրթիռները: Համադ Ալ Թանին մերժեց Մերֆիի պահանջը՝ պատճառաբանելով, որ դրանք անհրաժեշտ են Կատարի անվտանգության ապահովման համար[20]: Կոնգրեսն արգելեց զենքի վաճառքը Կատարին: Դրա հետևանքով երկու երկրների միջև տնտեսական և ռազմական հարաբերությունները սառեցին մինչև 1991 թ.[21]:

Կատար-ԱՄՆ հարաբերությունների մերձեցումը 1990-ական թթ.

Կատարի և ընդհանրապես Ծոցի պետությունների համար անվտանգային նոր մարտահրավեր դարձավ 1990 թ. Իրաքի կողմից Քուվեյթի բռնակցման պատճառով սկսված Ծոցի ճգնաժամը[22]: 1990-ականների սկզբից ԱՄՆ-ն խորապես ներքաշվեց Ծոցի տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման մեջ: Իրաքի պատերազմը Քուվեյթի դեմ և դրա հետագա զարգացումները ԱՄՆ-ին հնարավորություն տվեցին իրականացնելու սեփական ծրագրեր Մերձավոր Արևելքում: Ստեղծվեցին բարենպաստ պայմաններ մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի գերիշխանության համար: Այդ ամենի շնորհիվ՝ ԱՄՆ-ն տարածաշրջանում ապահովեց իր ուղղակի ռազմական ներկայությունը՝ մշտական ռազմակայաններ ստեղծելու և Ծոցի մի շարք երկրների հետ պաշտպանական պայմանագրեր կնքելու միջոցով: Բացի այդ, ԱՄՆ-ն վերահսկողություն հաստատեց տարածաշրջանի նավթային պաշարների նկատմամբ[23]: Ծոցի պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի նպատակն էր ցույց տալ, որ միայն իր միջամտությամբ և իր անվտանգային երաշխիքներով է հնարավոր պահպանել Ծոցի պետությունների գոյատևման և բարգավաճման համար այնքան անհրաժեշտ անվտանգությունը: 1990 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը Ծոցում ծավալված ճգնաժամի օրերին հայտարարեց համաշխարհային նոր աշխարհակարգի մասին: Ծոցի ճգնաժամի ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղար Բեյքերը հայտարարեց. «Թեև նոր աշխարհակարգի հիմնական կանոնները դեռ համաձայնեցված չեն, սակայն Ծոցի ճգնաժամը մեծ դեր է խաղում այդ կանոնների սահմանման հարցում»[24]:

---

[19] Qatar Opens Ties to Moscow at Time of Strains with U.S. The New York Times Archives, https://www.nytimes.com/1988/08/02/world/qatar-opens-ties-to-moscow-at-time-of-strains-with-us.html

[20] Qatar Rejects U.S. Demand for Return of Illicit Stingers, The New York Times Archives, https://www.nytimes.com/1988/06/28/world/qatar-rejects-us-demand-for-return-of-illicit-stingers.html

[21] Saidy 2017, 294.

[22] Kamrava 2018, 20.

[23] Darvishi, Jalilvand 2010, 175.

[24] Stanley 1991, 11-13.

Աշխարհաքաղաքական խոցելիությունը Կատարին պարտադրում էր ցուցաբերել խելամիտ և հավասարակշռված մոտեցում, ինչը կարող էր հետագայում երաշխավորել իր անվտանգությունը: Շեյխ Խալիֆա Ալ Թանին ականատես եղավ Քուվեյթի գրավմանը և կռվեց իրաքյան զավթիչների դեմ՝ հասկանալով, որ Քուվեյթից հետո Կատարը հեշտությամբ կարող է լինել հաջորդը: Կատարն արաբական մի շարք երկրների հետ միասին դատապարտեց Քուվեյթի բռնակցումը, պահանջեց իրաքյան զորքերը դուրս բերել Քուվեյթից և վերականգնել վերջինիս ինքնիշխանությունն ու անկախությունը: Բացի այդ, Կատարը ռազմաքաղաքական մեծ աջակցություն ցուցաբերեց ԱՄՆ-ին[25]:

1991 թ. հունվարի 17-ին ՄԱԿ-ի անդամ երեսուն երկրի դաշնակից ուժերը ԱՄՆ-ի գլխավորությամբ ձեռնամուխ եղան Իրաքի դեմ «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությանը[26]: Դաշինքի ուժերին միացավ նաև Կատարը, որը թույլատրեց իր երկրի տարածքն օգտագործել Քուվեյթ ներխուժած իրաքյան ուժերի դեմ: Դոհան դաշնակից երկրներին տրամադրեց կարևոր նյութատեխնիկական միջոցներ[27]: Որպես Ծոցի պատերազմում ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի մաս՝ Կատարի օդային և ցամաքային ուժերն ակտիվորեն մասնակցեցին իրաքյան ուժերի դեմ կազմակերպված գործողություններին: Կատարը մեծ դեր ունեցավ նաև սաուդական Խաֆջի քաղաքի վրա իրաքյան հարձակումը կանխելու գործում: Խաֆջի տանող ափամերձ ճանապարհի պաշտպանությունը վստահվեց Կատարի տանկային գումարտակին[28]: Պատերազմի ընթացքում Կատարը 1600 հոգուց բաղկացած մեքենայացված գումարտակ, 25 տանկ և 60 այլ զրահամեքենաներ տրամադրեց դաշնային ուժերին: Կատարը նաև իր փոքրաթիվ օդային ուժերից 700 զինվոր, 21 կործանիչ և 12 զինված ուղղաթիռ տրամադրեց նրանց[29]:

Պարսից ծոցի ճգնաժամից հետո տարածաշրջանի արաբական երկրները, այդ թվում՝ Կատարը, հանգեցին այն եզրակացության, որ տարածաշրջանում անկայունությունն ու հավանական ճգնաժամերը կանխելու համար անհրաժեշտ է գերիշխող և ուժեղ երկրի առկայություն: Ծոցի երկրները անվտանգության ոլորտում սկսեցին համագործակցել ԱՄՆ-ի հետ, ինչպես նաև ֆինանսական աջակցություն տրամադրեցին ԱՄՆ-ի շարունակական ռազմական ներկայության համար[30]: Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ-ի

[25] Blanchard 2014, 4.
[26] Հովհաննիսյան 2006, 785:
[27] Terrill 2009, 71.
[28] Westermeyer 2008, 10.
[29] Kamrava 2018, 45.
[30] Darvishi and Jalilvand 2010, 175.

ռազմակայանները Սաուդյան Արաբիայից տեղափոխվեցին Կատար՝ ի պատասխան Սաուդյան Արաբիայի ներքին աճող ճնշման[31]:

1990-ականների կեսերից սկսած՝ և՛ Կատարը, և՛ ԱՄՆ-ն ներդրումներ են իրականացրել Կատարում ռազմական օբյեկտների կառուցման և զարգացման համար, որոնք կազմում են Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի Կենտրոնական հրամանատարության օդային և ցամաքային լոգիստիկ ցանցի հիմնական հանգույցը: Կատարի կառավարության կողմից պաշտպանական համակարգեր գնելու որոշումներն ընդունվեցին տարածաշրջանային զարգացումներին համապատասխան: Առաջին տարիներին դրանց նպատակը հնարավոր հարձակումներից պաշտպանվելն էր, սակայն հետագայում պարզվեց, որ զինված ուժերի արդիականացումը Կատարին ավելի անկախ է դարձրել Ծոցի մյուս արաբական պետություններից[32]:

«Փոթորիկ անապատում» ռազմական համատեղ գործողության հաղթանակին հաջորդեց Կատարի և ԱՄՆ-ի միջև պաշտպանական համագործակցության համաձայնագրի կնքումը 1992 թ. հունիսի 23-ին[33]: Համաձայնագրի տեքստը գաղտնի է, սակայն կան տեղեկություններ, որ այն նախատեսում էր ԱՄՆ-ի զինվորականների մուտքը Կատարի ռազմական օբյեկտներ, ԱՄՆ-ի ռազմական տեխնիկայի նախնական դիրքավորումը Կատարի տարածքում, Կատարի ռազմական ուժերի վերապատրաստում: 1992 թ. ի վեր ԱՄՆ-ն սկսեց մեծաքանակ զինված ուժեր կենտրոնացնել Դոհայից ոչ հեռու գտնվող «Ալ Սայլիյա» ճամբարում[34]:

Ծոցի ճգնաժամը, Քուվեյթի շուրջ դրամատիկ զարգացումները մեծ ցնցում առաջացրին տարածաշրջանում: Ծոցի հասարակություններն իրենց իշխանություններից պահանջում էին ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել ներքին և արտաքին կայունությունն ապահովելու համար: Այս ամենը ևս պատճառ դարձավ Կատարում 1995 թ. Համադ Ալ Թանիի կատարած հեղաշրջման համար[35]:

Համադ բին Խալիֆա Ալ Թանին նախքան պաշտոնապես իշխանության գալը սկսեց քաղաքական համախմբման գործընթաց: 1989-1992 թթ. ընթացքում Համադ Ալ Թանին՝ որպես թագաժառանգ, վերադասավորեց նախարարական կաբինետը՝ իրեն համախոհ Ալ Թանիների նոր ներկայացուցիչներին առաջ բերելով իշխանական օղակներ[36]: 1995 թ. հունիսի 27-ին պալատական անարյուն հեղաշրջման շնորհիվ Շեյխ Համադ Ալ Թանին դարձավ երկրի ղեկավարը: 1995 թ. սկիզբ դրվեց Կատարի քաղաքական

[31] Cooper and Momani 2011, 123.
[32] Blanchard 2011, 9-10.
[33] Sharp 2004, 8.
[34] Katzman 2022, 13-14.
[35] Fromherz 2012, 110.
[36] Дербенев 2019, 46.

հայեցակարգի մշակմանը և հիմնական ուղենիշների սահմանմանը: Համադի ջանքերով պետականաշինությունը Կատարում հասավ նոր բարձունքների, նրա կառավարումը վերափոխեց Կատարի դերն ու ազդեցությունը տարածաշրջանում[37]:

Համադ Ալ Թանին հեղաշրջում կատարելու հարցում ստացավ ԱՄՆ-ի աջակցությունը: ԱՄՆ-ի աջակցության մասին Շեյխ Համադին հաղորդել էր նրա զարմիկ Համադ բին Ջասեմ բին Ջաբր Ալ Թանին, որն այդ ժամանակ գտնվում էր Վաշինգտոնում: ԱՄՆ-ն անմիջապես ճանաչեց Համադ Ալ Թանիի իշխանությունը: ԱՄՆ-Կատար պաշտպանական համագործակցությունը նոր թափ ստացավ Շեյխ Համադի օրոք[38]:

1995 թ. մարտին Կատարը պաշտոնապես համաձայնեց ԱՄՆ-ի բանակի մեկ մեքենայացված բրիգադի համար նախատեսված ծանր տեխնիկայի նախնական տեղակայմանը Կատարում՝ ներառյալ մինչև 110 ամերիկյան «Աբրամս Մ1» տանկերը և «Բրեդլի» հետևակի մարտական մեքենաները, ինչպես նաև մինչև 4000 մեքենայի չափով աջակցող բազայի նախնական տեղակայումը: Այս ուժերի առաջին տարրերը տեղափոխվեցին Կատար 1996 թ. հունվարին[39]:

1996 թ. Կատարը կառուցեց ավելի քան մեկ միլիարդ դոլար արժողությամբ «Ալ-Ուդեյդ» օդային ռազմաբազան, որն սկսեց ծառայել ԱՄՆ-ի տարածաշրջանային նպատակների իրագործմանը[40]: Ռազմաբազայի հարևանությամբ տեղակայվեցին ԱՄՆ-ի օդային ուժերի կենտրոնական հրամանատարության, ԱՄՆ-ի հատուկ գործողությունների և ԱՄՆ-ի կենտրոնական հրամանատարության կենտրոնակայանները[41]: Թե՛ Կատարը, թե՛ ԱՄՆ-ն ներդրումներ են իրականացրել 1990-ական թթ. կեսերից այս օբյեկտների կառուցման ու ընդլայնման համար[42]:

ԱՄՆ-ի և Կատարի միջև երկկողմանի հարաբերությունները խթանելու նպատակով ամերիկյան մի քանի ընկերություններ 1996 թ. հիմնեցին ԱՄՆ-Կատար բիզնես խորհուրդը, որն աջակցեց այնպիսի նախագծերի ստեղծմանը, ինչպիսիք են Ալ-Ջազիրան, ExxonMobil-ը, Qatar Airways-ը և այլն[43]:

1997 թ. Շեյխ Համադը կատարեց իր առաջին պետական այցը Վաշինգտոն: Այցի ընթացքում նրան ուղեկցում էին Կատարի արտգործնախարար Շեյխ Համադ բին Ջասեմ բին Ջաբր Ալ Թանին, Կատարում ԱՄՆ-ի դեսպան Պատրիկ Թերոսը: Նախագահ Բիլ Քլինթոնի և պետքարտուղար Մադլեն

[37] Cooper, Momani 2011, 117.
[38] Fromherz 2012, 112
[39] Kamrava 2018, 147.
[40] Sharp 2004, 8.
[41] Wallin 2018, 7-8.
[42] Blanchard 2010, 3.
[43] Mission & History of US-Qatar Business Council, USQBC Business Portal, https://www.usqbc.org/about-the-council

Օլբրայթի հետ ունեցած հանդիպումներից բացի, Շեյխ Համադն ընդունելություն կազմակերպեց Վաշինգտոնի «Ուիլարդ» հյուրանոցում, որտեղ ներկա էին ԱՄՆ-ի կառավարության պաշտոնյաներ, Մերձավոր Արևելքի քաղաքական և տնտեսական հարցերով զբաղվող դիվանագետներ և այլք[44]:

1999 թ. փետրվարին Կատար այցելեց ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի նախագահ, գեներալ Հենրի Շելթոնը, որն այնտեղ հայտարարեց, որ նախնական դիրքավորման կայանն ավելի կընդլայնի ԱՄՆ-ի և Կատարի կարողություններն ու հնարավորությունները տարածաշրջանում: Կատարը ողջունեց ԱՄՆ-ի կենտրոնական հրամանատարության առաջխաղացման ծրագիրը և ամերիկյան ռազմածովային ուժերի P-3 ծովային պարեկային ինքնաթիռներին թույլ տվեց տեղակայվելու Կատարի տարածքում[45]:

1999 թ. մարտի 8-ին Կատարում առաջին անգամ տեղի ունեցան ընտրություններ 29 անդամից բաղկացած՝ քաղաքային գործերով խորհրդատվական խորհրդի կազմավորման համար[46]: ԱՄՆ-ն աջակցեց քաղաքական ազատականացման ուղղությամբ Կատարի ձեռնարկած քայլերին: ԱՄՆ-ի կոնգրեսի պատվիրակությունն ընտրություններին ներկա էր որպես դիտորդ: Ընտրություններից հետո Կոնգրեսն ընդունեց բանաձև, որով շնորհավորեց Կատարի Պետությանը և նրա քաղաքացիներին ժողովրդավարական սկզբունքներին և կանանց ընտրական իրավունքին նվիրվածություն ցուցաբերելու համար[47]:

Այսպիսով՝ 1990-ականներին սկզբնավորվեց ԱՄՆ-Կատար ռազմավարական գործընկերությունը, որը տարիներ շարունակ ծառայում էր ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության նպատակներին, ինչպես նաև ապահովում Կատարի՝ որպես միջազգային դերակատարի վերելքը:

Եզրակացություններ

Կատար-ԱՄՆ հարաբերությունները, որոնք սկսել էին ձևավորվել դեռևս բրիտանական պրոտեկտորատի տարիներին, Կատարի անկախության հռչակումից հետո թևակոխեցին նոր փուլ: Վաշինգտոնի նպատակն էր Մերձավոր Արևելքում հավատարիմ վարչակարգեր ձևավորելը, ինչը կապահովեր ԱՄՆ-ի գերիշխանությունը տարածաշրջանում և կկարգավորեր էներգետիկ անվտանգության հարցը: Իրանում շահի տապալումն ու Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վստահելի դաշնակցի կորուստը, Իրան-իրաքյան պատերազմը մեծացրին ԱՄՆ-ի անմիջական մասնակցության անհրաժեշտությունը տարածաշրջանում:

---

[44] Killgore A., Qatar's Emir Visits Washington, https://www.wrmea.org/1997-august-september/diplomatic-doings.html

[45] Prados and Ruebner 1999, 6.

[46] Freedom in the World 1999 - Qatar, Freedom House, UNHCR, https://www.refworld.org/docid/5278c6f222.html

[47] Prados, Ruebner 1996, 6.

Իրաքի պատերազմը Քուվեյթի դեմ և դրա հետագա զարգացումները ԱՄՆ-ին հնարավորություն տվեցին իրականացնելու սեփական ծրագրերը Մերձավոր Արևելքում: Այս ամենի շնորհիվ ԱՄՆ-ն ապահովեց իր ուղղակի ռազմական ներկայությունը տարածաշրջանում, ինչպես նաև վերահսկողություն սահմանեց տարածաշրջանի նավթային պաշարների վրա: Ծոցի ճգնաժամից հետո ԱՄՆ-ն դարձավ տարածաշրջանի նոր անվտանգային համակարգի նախագծողը:

Աշխարհաքաղաքական խոցելիությունը Կատարին պարտադրում էր խելամիտ և հավասարակշռված մոտեցում ցուցաբերել, ինչը կարող էր հետագայում երաշխավորել իր անվտանգությունը: Կատարը որոշեց ապահովել իր երկրի անվտանգությունը ԱՄՆ-ի պաշտպանական վահանի ներքո: Կատարն իր անկախության առաջին շրջանում կարողացավ համագործակցային կապեր հաստատել ԱՄՆ-ի հետ և շահել նրա վստահությունը՝ դառնալով ավելի անկախ Ծոցի մյուս արաբական պետություններից: ԱՄՆ-ի և Կատարի պաշտպանական համագործակցությունն առանցքային դեր ունեցավ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության համար:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ-ն որոշիչ դեր խաղաց Կատարի Պետության կայացման գործընթացում և դարձավ Կատարի կայունության և անվտանգության երաշխավորը, ինչն էլ կանխորոշեց վերջինիս հետագա տեղն ու դերը տարածաշրջանում և միջազգային հարթակներում: Կատարը դարձավ մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքական և ռազմավարական շարժիչ ուժը՝ շնորհիվ իր ճկուն և շրջահայաց արտաքին քաղաքականության:

Օգտագործված գրականություն

Կարապետյան Ռ. 2019, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 528 էջ:

Հովհաննիսյան Ն. 2006, Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, «Զանգակ», 839 էջ:

Дербенев А. 2019, Катар в конце XX - начале XXI в.: динамика политических процессов, Вестник Московского университета, Москва, 13 (1), с. 39-53.

Blanchard Ch. 2010, Qatar: Background and U.S. Relations, Congressional Research Service, 26 p.

Blanchard Ch. 2011, Qatar: Background and U.S. Relations, Congressional Research Service, 21 p.

Blanchard Ch. 2014, Qatar: Background and U.S. Relations, Congressional Research Service, 17 p.

Cooper A., Momani B. 2011, Qatar and Expanded Contours of Small State Diplomacy, The International Spectator: Italian Journal of International Affairs, 46:3, p. 113-128.

Darvishi F., Jalilvand A. 2010, Impacts of U.S. Military Presence in the Arabic Countries of Persian Gulf, Security Shield or Reduce of Legitimacy, Geopolitics Quarterly, Vol. 6, no. 4, p. 167-180.

Diplomatic and Consular Relations by Country, since 1776: Qatar, A Guide to the United States, History of Recognition, Office of the Historian, https://history.state.gov/countries/qatar (downloaded 14.07.2023).

Freedom in the World 1999 – Qatar, Freedom House, UNHCR, https://www.refworld.org/docid/5278c6f222.html (downloaded 18.08.2023).

Fromherz A. 2012, Qatar: The Rise to Power and Influence, 1st ed., London, "I. B. Tauris", p. 224.
Kamrava M. 2015, Qatar, Small State, Big Politics, 1st ed., New York, "Cornell University Press", 232 p.
Kamrava M. 2017, Iran-Qatar Relations. Security and Bilateral Issues between Iran and its Arab Neighbors, Security and Bilateral Issues Between Iran and its Arab Neighbors, p. 167-187.
Kamrava M. 2018, Troubled Waters: Insecurity in the Persian Gulf, New York, "Cornell University Press", 216 p.
Mission & History of US-Qatar Business Council, USQBC Business Portal, https://www.usqbc.org/about-the-council (downloaded 08.08.2023).
Katzman K. 2022, Qatar: Governance, Security and U.S. Policy, Congressional Research Service, 21 p.
Kaussler B. 2015, Tracing Qatar's Foreign Policy Trajectory and Its Impact on Regional Security, Arab Center for Research & Policy Studies, 48 p.
Killgore A., Qatar's Emir Visits Washington, https://www.wrmea.org/1997-august-september/diplomatic-doings.html (downloaded 15.08.2023).
Mission & History of US-Qatar Business Council, USQBC Business Portal, https://www.usqbc.org/about-the-council (downloaded 08.08.2023).
Mousavian S., A Revolution and a War: How Iran Transformed Today's Middle East, https://www.thecairoreview.com/essays/a-revolution-and-a-war-how-iran-transformed-today s-middle-east/ (downloaded 17.07.2023).
Prados A. and Ruebner 1999, Qatar: Background and U.S. Relations, Congressional Research Service, 6 p.
Qatar, Miffed by U.S. Criticism, Opens Soviet Relations, Los Angeles Times Archives, https://www.latimes.com/archives/la-xpm-1988-08-01-mn-5022-story.html (downloaded 17.07.2023).
Qatar Opens Ties to Moscow at Time of Strains with U.S. The New York Times Archives, https://www.nytimes.com/1988/08/02/world/qatar-opens-ties-to-moscow-at-time-of-strains-with-us.html (downloaded 18.07.2023).
Qatar Rejects U.S. Demand for Return of Illicit Stingers, The New York Times Archives, https://www.nytimes.com/1988/06/28/world/qatar-rejects-us-demand-for-return-of-illicit-stingers.html (downloaded 18.07.2023).
Saidy B. 2017, Qatari-US Military Relations: Context, Evolution and Prospects, Contemporary Arab Affairs, Vol. 10, no. 2, p. 286-299.
Sharp J. 2004, Qatar: Background and Relations, Congressional Research Service, 15 p.
Sorkhabi R., The Qatar Oil Discoveries, https://geoexpro.com/the-qatar-oil-discoveries/ (downloaded 07.07.2023).
Stanley S. 1991, The US Role in a New World Order: Prospects for George Bush's Global Vision, Congressional Research Service, 40 p.
Stork J., Wenger M. 1991, The US in the Persian Gulf: From Rapid Deployment to Massive Deployment, Middle East Report, no. 168, p. 22-26.
Telegram From the Embassy in Qatar to the Department of State, Doha, January 28, 1975, Foreign Relations of the United States, 1969–1976, Vol. XIX, part 2, Documents on the Middle East region, 1973–1976, Office of The Historian, https://history.state.gov/historicaldocuments/frus1969-76ve09p2/d49 (downloaded 16.07.2023).
Terrill A. 2009, The 1991 Iraq War - Escalation and Intra War Deterrence During Limited Wars in The Middle East, US Army War College, p. 48-86.
The Eisenhower Doctrine, Milestones in the History of U.S. Foreign Relations 1953-1960, Office of The Historian, https://history.state.gov/milestones/1953-1960/eisenhower-doctrine (downloaded 12.07.2023).
Wallin M. 2018, U.S. Military Bases and Facilities in the Middle East, American Security Project, p. 7.

Westermeyer P. 2008, The Battle of Al-Khafji, Washington, "United States Marine Corps History and Museums Division Historical Branch", 36 p.
Zahlan R. 1979, The Creation of Qatar, New York, "Routledge", 160 p.

ТРАНСФОРМАЦИИ РОЛИ КАТАРА ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ США (1970-1990-ЫЕ ГГ.)

Кнарик Саргсян

Резюме

Изучение роли Катара в ближневосточной политике США в 1970-1990-е годы дает возможность выявить влияние США в становлении Катара как государства. Динамика развития американо-катарских отношений, особенности этих отношений позволяют проанализировать развитие сотрудничества в указанный период в сфере обороны.

Проведенные исследования позволяют заключить, что США сыграли решающую роль в процессе становления Государства Катар, став гарантом стабильности и безопасности Катара, что и определило будущее место и роль Катара в регионе и на международной арене. Катар, в свою очередь, стал политической и стратегической движущей силой США в ближневосточном регионе благодаря своей гибкой и осмотрительной внешней политике.

Ключевые слова – США, Катар, Ближний Восток, Персидский залив, международные отношения, внешняя политика, стратегическое партнерство.

TRANSFORMATIONS OF THE ROLE OF QATAR IN FOREIGN POLICY OF THE USA (1970S-1990S)

Knarik Sargsyan

Abstract

Studying the role of Qatar in the US Middle East policy during the period of 1970s-1990s provides an opportunity to observe the influence of the US in the establishment of Qatar as a state. By analyzing the development dynamics of US-Qatar relations and highlighting the features of those relations, it is possible to analyze the US-Qatar defense cooperation during the said period.

The analysis shows that the US played a crucial role in establishing the State of Qatar and became the guarantor of Qatar's stability and security. This determined Qatar's future place and role in the region and on the international platforms. Thanks to its flexible and prudent foreign policy, Qatar became a political and strategic driving force for the United States in the Middle East region.

Key words – USA, Qatar, Middle East, Persian Gulf, international relations, foreign policy, strategic partnership.